«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հայ ազգային կուսակցությունների ստեղծումը
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Թեհմինե Նաղդալյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի Ա.Մռավյանի անվան №4 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1.1 Արմենականների կուսակցության ստեղծումը և գործունեությունը.....4

1.2 Հնչակյան կուսակցության ստեղծումը և գործունեությունը.....7

1.3 Դաշնակցություն կուսակցության ստեղծումը և գործունեությունը.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գաղտնի կազմակերպությունների ստեղծումը պարարտ հող նախապ ատր աս տեց ազգային կուսակցությունների առաջացման համար:

Առաջին հայ քաղաքական կուսակցությունը ծնունդ առավ Վանում, որտեղ դեռևս չէին մարել «Սև խաչի» գործունեության կայծերը:

Իբրև քաղաքական անբարեհույս անձ Վանից արտաքսվելուց հետո Մկրտիչ Փորթուգալյանը հաստատվեց Ֆրանսիայի Մարսել քաղաքում և սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը:Այնուհետև ստեղծվեցին տարբեր կուսակացություններ,որոնց նպատակը Հայաստանի ազատագրումն էի:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ՝ Հայ ազգային կուսակացություններն էին

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ `Հայ ազգային կուսակցությունների ստեղծման առանձնահատկություններն են

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Բացահայտել հայ ազգային կուսակցությունների ստեղծման առանձնա հատ կությունները

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ-Աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք ենթագլուխներից, և օգտագործված գրականության ցանկից:

1.1 ԱՐՄԵՆԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հայ քաղաքական կուսակցությունը ծնունդ առավ Վանում, որտեղ դեռևս չէին մարել «Սև խաչի» գործունեության կայծերը:

Իբրև քաղաքական անբարեհույս անձ Վանից արտաքսվելուց հետո Մկրտիչ Փորթուգալյանը հաստատվեց Ֆրանսիայի Մարսել քաղաքում և սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը:

«Սև խաչի» նախկին անդամները, որ հուսալքվել էին Մկրտիչ Փորթուգալյանի արտաքսումով, աստիճանաբար նորից համախմբվեցին, և 1885թ. խիստ գաղտ նիության պայմաններում Վանում ծնվեց առաջին քաղաքական կուսակցությունը:

Նրա անդամները ուսուցչի հրատարակած թերթի անունով կուսակցությունը կոչեցին Արմենական:

Կուսակցության փաստական ստեղծողը և ղեկավարը Մկրտիչ Թերլեմեզյանն էր, որը հետագայում հոր անունով կոչվեց Ավետիսյան:

1890-ականներին ստեղծած իրենց առաջին ծրագրում իբրև կուսակցության առաջնային նպատակ մատնանշում էին թուրքական բռնապետությունը հեղա փոխության միջոցով տապալելու անհրաժեշտությունը:

Նրանք գտնում էին, որ պետք է ժողովրդին նախապատրաստել հեղափոխ ության համար, զինախմբեր ստեղծել:

Ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ էր զենք հայթայթել:

«Արմենիայի» օրինակները և զենք Վան փոխադրելու ժամանակ զոհվեցին առաջին երիտասարդ արմենականներ արևելահայ Վարդան Գոլոշյանն ու վանեցի Հովհաննես Ագրիպասյանը:

Այնտեղի հոգևոր մշակույթահին և կրթական հաստատությունների շուրջ համախմբված երիտասարդների գաղափարական ոգեշնչողներն են՝ Մկրտիչ Խրիմյանը, Մկրտիչ Փորթուգալյանը և Մկրտիչ Ավետիսյանը:

Արմենականները հայկական հարցի լուծումը կապում էին Արևմտյանի Եվրոպայի և Ռուսաստանի օգնության հետ և պահանջում էին անմիջացպես կա տարել Բեռլինի վեհաժողովի որոշումները:

Կուսակցության խրագրի առաջին տարբերակում արմենակնները կարևորում էին առանց ցուցամոլության ժողովրդի զինումը և նախապատրաստումւ համա ժողովրդական աբստամբության:

Նրանք անհատական պարտիզանական պայքարը համարում էին անընդունելի և անհեռանկարային:

1880 ականների վերջերին Արմենական կուսակցության հսկողության տակ էր պահում Պարսկսատանից Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներ տարվող ուղիները:

Այդ պատասխանատու գործն իրականացնելու համար նրանք մշտապես հանդիպում էին թուրքական զարքերի հետ:

XIX ¹ 90 ակններին սկզբին Արմենականների մեխ մասը ոկղմնորոշվում է դեպի հայդուկային պայքարը, և համագործակցում նորաստեղծ դաշնակցություն կուսակցության հետ:

Հետաագայում կոիսակցության անդամներ դարձան՝Արմենակ Եկարյանը, Փանոս Թերլոմեզյանը և ուրիշներ:

896թ. Վանի ինքնապաշտպանական մարտերը ղեկավարում էր Մկրտիչ Ավետիսյանը:

Նա իր շուրջը համախմբեց ոչ միայն արմենականներին, այլև դաշնա կցականներին ու հնչակյաններին և ուժգին հակահարված տվեց թուրքական ուժերին:

Մի խումբ երիտասարդների հետ Պարսկաստան անցնելու ճանապարհին նա զոհվեց:

Ծանր կորուստներ ունեցած կուսակցությունն իր գոյությունը պաշտպանեց մինչև 20-րդ դարի երկրորդ տասնամյակը:

Նա մեծ մասնակցություն ունեցավ 1915թ. Վանի ինքնապաշտպանական մարտերին, իսկ 1921թ., միավորվելով այլ քաղաքական ուժերի հետ, ստեղծվեց Ռամ կավար-ազատական կուսակցությունը:

1885 Վանում ստեղծված Առաջին քաղաքական կուսակցության՝ Արմենա կանների գործունեության մասին եղել են անդրադարձներ տարբեր ոլորտների մասնագետտների կողմից:

Կուսակցության կարճատև գործունեության հիմքում ընկած էր մի հայեց ակարգ՝գործել այնպես որ արևմտահայ տարրը ավելի քիչ տուժի և կազմալուծվի;

18 հայոց ջարդեը մասայական բնույթ էին կրում երկրի փրկության համար առաջ եկան մի շարք կուսակցություններ որոնք պայքարի համար տարբեր ռազմավարություններ էին մշակում:

Արմենական կուսակցության գործունեությունը կարելի է համարել արյդունավ ետ,քանի որ հենց կուսակցությունը ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում:

Սա պայմանավորված է այն հանգամանքով որ կուսակցության անդամները առավել հիմնավոր պատկերացումներ ունեին տվյալ տարածքի բնակիչչների պայքարի դժվարությունների.տարածաշրջանի ընձեռնված հնարավորությունների և Օսմանյան Կայսրության ունեցած դիրքորոշումներով:

Այս կուակցության գաղափարները նաև շարունակվեցին օգտագործեվլ կուսակցության մյուս սերունդների կողմից,որոնք իրանց արդյունավետությունը ունեցան նաև հետագայում:

Արմենականների կուսակցության զուսպ մարտավորությունը ցավոք միայն հաջողություն ունեցավ Վանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ փրկելվ բնակչությանը կոտորվելուց:

Արմենականների ծրագրային մի շարք դրույթներ պահպանում են իրնեց հնչեղությունը նաև մեր օրերում:

1.2 ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1887թ. օգոստոսին Ժնևում ստեղծվեց հայ ազգային նոր կուսակցություն:Նրա հիմնադիրներն էին Ժնևի համալսարաների արևելահայ ուսանողներ՝Ավետիս Նազարբեկյանը, Ռուբեն Խանազատ,Գաբրել Կաֆյան,Մարո Նազարբեկյանը և ուր իշներ:

1887 թվականի վերջին հրատարակվում է Հնչակ թերթը որի անունով էլ կուսակցությունը կոչվում է հնչակյան:

1888 թվականի աշնանը հրատարակվում է նրա կուսակցության ծրագիրը: Գլխավոր նպատակն էր հռչակվում Հայկական հարցի լուծումը, Արևմտյան Հայաս տանի ազատագրումը,սոցիալիզի հետևանքով առաջացված մարդու կողմից մար դու շահագործման վերացումը:

Հայ քաղաքական մտիք ապտմության մեւ հնչյանաներին առաջինն էին,որ հայկական հարցի լուծումը համարում էին ամբողջական հայրենքիում պետականու թյան վերաստեղծումը:

Նպատակին հասնելու համար նրանք գրեթե բոլոր ուժերը և գործունեությունը կենտրոնցրել էին Արևմտյան Հայաստանում,գաղտնի կազմակերպություններ էին ստեղծում,ցույցեր ելույթներ կազմակերպում և այլն:

Հնչակյանները կարևորում էին թուրքահպատակն ժողովրդների հետ համագ արծակցության հարցը;

1890 թվականին Կ.Պոլսում հնչակյանները կազմակերպեցին ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ թաղամասի ցույցերը՝ պահանջելով իրագործել 61-րդ հոդվածը:

1894 թվականի Սասունի աբստամբության մասնակիցներն էին, 1895–1896 թվականի Զեյթունի աբստամբության կազմակերպիչները:

Այս կուսակցության Կ.Պոլսի կազմակերպություն աչքի ընկնող անդամներն էին՝

Միհրան Տամատյանը,

Արփիար Արփիարյանը:

1896 թ. Լոնդոնի առաջին համագումարում, հնչակյան կուսակցություն,դեռևս լիովին չձևավորված պառակտվեց երկու թևի՝

- սոցիալիստական,

- ազգային։

Սոցիալիստական թև՝ Ա.Նազարբեկյանի ղեկավարության կարևոր խնդիր էր համարում սոցիոլական ազատությունը և սոցիոլիզմը։

Ազգային թևը 1898 թվականին իրենց կոչեց վերակազմյալ Հնչակյաններ կամ Արփիարականներ՝Արփիար Արփիարյանի գլխավորությամբ։

Հետագայում Նազարբեկյանի կողմնակցիները,որոնք դեմ էին սոցիալիզմի մասին կետը ծրագրից հանելուն,մեծ մասամբ հարեցին սոցիալ-դեմոկրատական ուղղության կազմակերպություններին։

Հնչակյան կուսակցություն ևս իր խոշոր ավանդն ունեցաց ազգային ազատագրական շարժման ծավալման գործում։

Նրանք գտնվում էին ռուս նարոդնիկների ազդեցության տակ, որոնց պայքարի եղանակները, հատկապես ահաբեկչությունը, գրավում էին հնչակյաններին։ Նրանք կապված էին նաև Ժնևում գործող Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» մարքսիստական խմբի հետ։ 1888թ. «Հնչակ» թերթում հրատարակվում է կուսակցության ծրագիրը, որի մեջ նախատեսվում էին գործունեության հեռավոր և մոտակա նպատակները։

Մոտակա նպատակը թուրքական բռնապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր, իսկ նրա իրագործման միջոցներն էին ագիտացիան, պրոպագանդան և տեռորը։

Արևմտյան Հայաստանն ազատագրելուց հետո նախատեսվում էր պարսկահայերի, ռուսահայերի ազատագրումը։ Հայության հատվածների միավոր ումից պետք է ստեղծվեր դեմոկրատական հանրապետություն։ Հեռավոր նպատակը սոցիալիզմի կառուցումն էր ողջ մարդկության համար, որը վերջ կդներ մարդու շահագործմանը մարդու կողմից։ «Հնչակում» հրատարակված այդ ծրագիրը հայտարարեց կուսակցության ստեղծման մասին։

1889թ. նրանց ներկայացուցիչը մասնակցեց II ինտերնացիոնալի հիմնադիր ժողովին։ Նույն թվին էլ Խանազատն ու Կաֆյանը մեկնեցին Կ. Պոլիս, հանդիպումներ ունեցան նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների հետ։ Նրանցից

Արփիար Արփիարյանին ոգևորեց ծրագրի Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը, և նա իր ողջ խմբով մտավ հնչակյան կուսակցության մեջ։

1890թ. Տրապիզոնում ստեղծվեց հնչակյան առաջին մասնաճյուղը, որը կապեր հաստատեց Կ.Պոլսի հնչակյանների հետ։ Միացյալ ջանքերով 1890թ. հուլիսի 15-ին կազմակերպվեց Գում-

Գափուի ցույցը, որը գնդակոծվեց կառավարության կողմից: Կուսակցության ուժեղ մասնաճյուղեր ստեղծվեցին մի շարք հայաշատ վայրերում: Կուսակցության ներսում եղած սոցիալիզմի վերաբերյալ տարաձայնությունները հարթելու համար 1896թ. հունվարին Լոնդոնում հրավիրվեց պատգամավորական ժողով:

Այնտեղ արևմտահայ հնչակյանները Ա. Արփիարյանի և Մ. Տամատյանի ղեկավարությամբ պահանջում էին, որ կուսակցությունը հրաժարվի սոցիալիզմի քարոզչությունից և ղեկավարման կենտրոնացված սկզբունքից:

Այդ ժամանակ կուսակցությունը բաժանվեց 2 թևի: 1896թ. Լոնդոնի պատգամավորական ժողովում արևմտահայ թևը ստացավ «վերակազմյալ հնչակյաններ» անունը: Նրանք հետագայում կատաղի պայքար սկսեցին իրար դեմ, որը հաճախ ավարտվում էր երկու թևի գործիչների սպանություններով:

1.3 ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծվել է 1890 թ-ի հուլիս-օգոստոսին Թիֆլիսում: Հիմնադիրներն ու առաջին ղեկավարներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռոստոմ): 1890 թ-ի սեպտեմբերին հրապարակված ՀՀԴ մանիֆեստում նշված է, որ նոր ստեղծված կուսակցության նպատակը ժողովրդի ուժերը համ ախմբելն է, Արևմտյան Հայաստանի համար քաղաքական և տնտեսական ազատ ություն ձեռք բերելը: Այն արտահայտվել է ՀՀԴ առաջին ծրագրում, որն ընդունվել է 1892 թ-ին՝ կուսակցության առաջին ընդհանուր ժողովում, հրապարակվել է 1894 թ-ին «Դրոշակ» պաշտոնաթերթում:

Դաշնակցությունը դավանում է ժողովրդավարության ու ընկերավարության (սոցիալիզմի) գաղափարներ, սակայն կուսակցության գաղափարախոսության, մարտա վարության և ռազմավարության հիմնական խնդիրը Հայկական հարցի լուծումն է (Արևմտյան Հայաստանի ազատագրումը, ինքնավարությունը): Նպատակին հասնելու հիմնական միջոցը ՀՀԴ-ն համարում էր զինված գործողություններն ու ահաբեկչությունը, քաղաքական աշխատանքը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս: Ծրագրի ագրարային մասում նախատեսվում էր «տալ չունեցողին հող և մշակողին ապահովել հողից օգտվելու կարելիությունը»:

Կարճ ժամանակում կուսակցության կազմակերպություններ են ստեղծվել Արևելյան Հայաստանում (Ալեքսանդրապոլ, Կարս,Երևան,Ղարաբաղ), Անդրկով կասի հայաշատ

քաղաքներում (Թիֆլիս, Բաքու),Հյուսիսային Կովկասում (Նոր Նախիջևան) Արևմտյան Հայաստանում (Մուշ, Սասուն, Վան), Թուրքիայում (Կոստանդնուպոլիս, Իզմիր), Կիլիկիայում, Եգիպտոսում, Եվրոպայում, Ամերիկայում: ՀՀԴ-ն զբաղվել է արևմտահայերին զինելու և ինքնապաշտպանության նախապատրաստելու, Արևմտյան Հայաստան զինատար և մարտական խմբեր առաքելու առաջնահերթ խնդիրներով:

Հայկական հարցը լուծելու խնդրում ՀՀԴ-ն կարևորում էր արևմտյան տերությունների դերը: «Դրոշակի» շուրջ համախմբված գործիչները (կոչվել են նաև դրոշ ակականներ) կապ էին հաստատել եվրոպական երկրների քաղաքական ու հասարակական շրջանակների հետ՝ հույս ունենալով եվրոպական տերությունների միջամտությամբ վերարծարծել և ապա լուծել Հայկական հարցը: Եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցին բևեռելու նպատակով ՀՀԴ-ն 1896 թ-ին կազմակերպեց Բանկ Օտոմանի (Օսմանյան բանկ) գրավումը Կոստա նդնու պոլսում: XIX դարի սկզբին գլխավորեց Անդրկովկասում հայության հուժկու ընդվզումը ցարական կառավարության քաղաքականության դեմ՝ հատկապես Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ-ի հունիսի 12-ի հրամանագրից հետո:

1905–06 թթ-ին Անդրկովկասում հրահրված հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ՀՀԴ-ն բազմաթիվ վայրերում գլխավորեց հայ բնակչության ինքնա պաշտպ անությունը, ահաբեկեց ցարական անընդունելի իշխանավորների: Ռուսական կառավ արությունը դատական գործ հարուցեց ՀՀԴ-ի դեմ, բանտարկեց կուսակցության ակտիվ անդամներին:

Առաջին աշխարհամարտի տարիներին ՀՀԴ-ն գործուն մասնակցություն ունեցավ հայկական կամավորական շարժման կազմակերպմանը: Մարտական գործողությունները ղեկավարեցին Անդրանիկը (Ա. Օզանյան), Դրոն (Դրաստամատ Կանայան), Համազասպը (Հ. Սրվանձտյան), Վարդանը (Վ. Մեհրաբյան), Քեռին (Արշակ Գաֆավյան) և ՀՀԴ մարտական դպրոցն անցած այլ գործիչներ: 1915 թ-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, նրանցից շատերը մասնակցեցին հայ բնակչության ինքնապ աշտպ անական մարտերին, շատերն էլ ցեղասպանության զոհ դարձան: Պատերազմի տարի ներին և հատկապես Ռուսաստանում 1917 թ-ի Փետրվարյան հեղափոխությունից հետո, աջակցելով Ժամանակավոր կառավարության քաղաքականությանը, դաշնա կցությունը մասնակցեց Անդրկովկասում ստեղծված բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների գործունեությանը. ազդեցիկ դիրք ուներ Հայոց ազգային խորհրդում և նրա մասնաճյուղերում: 1917 թ-ի Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՀՀԴ-ն մասնակցեց

Անդրկովկասյան իշխանության նոր մարմինների՝ Անդրկ ովկասյան կոմիսարիատի, ապա՝ Անդրկովկասյան սեյմի ստեղծմանը, երկրամասը Խորհրդային Ռուսաստանից անջատելուն և Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱԴՖՀ) կազմավորմանը: Ներքին տարա ձայնութ յունների և արտաքին քաղաքական գործոնների ազդեցության հետևանքով 1918 թ-ի մայիսի 26-ին ԱԴՖՀ-ն տրոհվեց. կազմավորվեցին Վրաստանի (մայիսի 26), Ադրբեջա նի (մայիսի 27), Հայաստանի (մայիսի 28) անկախ հանրապե տություն ները:Հայաստանի Հանրապետությունը (1918–20 թթ.) բազմակու սակցա կան, ժողովրդավարական պետություն էր, որի առաջատար քաղաքական ուժը ՀՀԴ-ն էր. նրա ներկայացուցիչներ Հովհաննես Քաջազնունին, Ալեքսանդր Խատիսյանը, Համազասպ Օհանջանյանը, Սիմոն Վրացյանը հաջորդաբար գլխավորեցին հանրա պետության կառավարությունը: 1919 թ-ի մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց Միացյալ և Անկախ Հանրապետություն:

Նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովի ընդունած նոր ծրագիրը վերահաստատել է Արևմտահայերի 2-րդ համագումարի և Հայաստանի խորհրդարանի՝ Միացյալ և Անկախ Հայաստան կերտելու գերխնդիրը, որը որպես վերջնանպատակ էր նաև 1982 և 1998 թթ-ին ընդունած ծրագրերում:

1921 թ-ի Փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտությունից (ապրիլի 2) հետո ՀՀԴ-ն իր գործունեությունը շարունակեց արտասահմանում: 1923 թ-ի նոյեմբերին խորհրդային իշխանությունների պահանջով Երևանում գումարված նախկին դաշնակցականների համահայաստանյան համագումարի որոշմամբ ՀՀԴ-ն ԽՍՀՄ-ում լուծարվեց, իսկ 1933 թ-ին կուսակցության 12-րդ ընդհանուր ժողովը պաշտոնապես լուծարեց իր ընդհատակյա կազմակերպությունը Հայաստանում:

ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովից հետո կուսակցությունը հետևողականորեն իրականացնում էր Հայոց ցեղասպանության կազմակերպիչների՝ երիտթուրք պարագլուխների ահաբեկման «Նեմեսիս» պատժիչ գործողությունը: Երկրորդ աշխարհամարտի (1939–45 թթ.) տարիներին ՀՀԴ առանձին ղեկավարներ, դեպի Արևելք Հիտլերի զորքերի առաջխաղացման մեջ տեսնելով ԽՍՀՄ-ի քայքայման և Հայաստանի անկախության վերականգնման հնարավորություն, համագործակցեցին հիտլերականների հետ: Սակայն ՀՀԴ-ին ենթակա որևէ հայկական զորամաս չմասնակցեց ռազմական գործողություններին: Պատերազմի ավարտին ՀՀԴ-ն պաշտպանեց Կարսի մարզը և Արդահանի գավառը ՀԽՍՀ-ին միավորելու ԽՍՀՄ պահանջը: 1947 թ-ին ՀՀԴ 15-րդ ընդհանուր

ժողովին ներկայացրած իր զեկուցման մեջ ՀՀԴ բյուրոն նշեց, որ Հայ դատը կարող է լուծվել միայն ԽՍՀՄ-ի հետ համագործակցությամբ: Սակայն ծավալված «սառը պատերազմի» տարիներին ՀՀԴ-ն փոխեց իր դիրքորոշումը և որդեգրեց հակախորհրդային կողմնորոշում:

ՀՀԴ-ի և հատկապես նրա Հայ դատի հանձնախմբերի գործունեությունը նպաստեց Հայոց ցեղասպանության ճանաչմանը Եվրախորհրդարանում (1987 թ-ի հունիս) հարցի քննարկմանը՝ ԱՄՆ-ի Սենատում և այլուր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Արմենական կուսակցության կարճատև գործունեության հիմքում ընկած էր մի հայեց ակարգ՝գործել այնպես որ արևմտահայ տարրը ավելի քիչ տուժի և կազմալուծվի:Արմենական կուսակցության գործունեությունը կարելի է համարել արդյունավետ,քանի որ հենց կուսակցությունը ստեղծվել էր Արևմտյան Հայաս տանում:Սա պայմանավորված է այն հանգամանքով որ կուսակցության անդա մները առավել հիմնավոր պատկերացումներ ունեին տվյալ տարածքի բնակիչչների պայ քարի դժվարությունների.տարածաշրջանի ընձեռնված հնարավորությունների և Օսմանյան Կայսրության ունեցած դիրքորոշումներով:Այս կուակցության գաղա փար ները նաև շարունակվեցին օգտագործեվլ կուսակցության մյուս սերունդների կողմից, որոնք իրանց արդյունավետությունը ունեցան նաև հետագայում: Արմենականների կուսակցության զուսպ մարտավորությունը ցավոք միայն հաջողություն ունեցավ Վանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ փրկելվ բնակչությանը կոտորվելուց:

2.Դառնալով իշխող կուսակցություն՝ ՀՀԴ-ն քայլեր կատարեց երկրի տնտեսությունը վերականգնելու, հանրապետությունում կարգ ու կանոն հաս տա տելու, լուսավորության գործը կարգավորելու համար: Սակայն հանրապետության ներքին ու արտաքին ծանր կացությունը հնարավորություն չտվեց շարունակել ստեղ ծարար աշխատանքը, հաղթահարել երկրում մոլեգնող սովը, անիշխանության դրսևո րումները:

Դրությունն ավելի բարդացավ Թուրքիայի և Ադրբեջանի մահմեդական բնակչության հրահրած խռովությունների պատճառով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աշոտ Մելքոնյան Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XX դդ դարի վերջը) / Ա.Մելքոնյան .- Երևան ՀՀ ԳԱԱ.պատմ.ինստ 2018. 412 էջ

2.Արմենական կուսակցություն գիտաժողովի նյութեր, Երևան 2017թ, 164էջ

Հավելված

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՍԵԱՆ
Ֆիլիպիոյ մէջ Քրիստոնէից Խորհուրդի մեծ ճարտարապետը